ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂ ՆԱԻՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

/Քանի որ խոսք գնաց Գորբաչովի խնդրանքի մասին, ես մի բան ունեմ ասելու: Փոխանակ մեզ խնդրելու, ավելի լավ կլիներ նա հրամայեր Ղարաբաղը մեզ հանձնել և ոչ թե մեզ ծնշեր/: Այսօր այստեղ խոսեց Մովսես Գորգիսյանը, որը ճիշտ հարց առաջ քաշեց՝ ռեֆերենդումի հարց անկախության համար, որովհետև այն բանական էակը, որը չի ուզում անկախություն, չի ուզում անկախ ապրել, նա ընդհանրապես ապրելու իրավունք չունի, նա ստրուկ է /ամբոխը - ճիշտ է, ճիշտ է, անկախություն, անկախություն.../: Ինչ եմ ուզում ասել: Գոյություն ունի 1921 թվականին կնքված /մարտի 16-ին/ Ռուս-Թուրքական պայմանագիր: Մենք դրա մասին շատ քիչ գիտենք, գրեթե ոչինչ չգիտենք: Այդ պայմանագիրը, որը կնքվեց մեր գլխի վրայով, որին նույնիսկ չթողեցին մասնակցել /դրա վերջնական ստորագրմանն ու ստեղծմանը/ Սովետական, այսինքն՝ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչներին, և կնքեցին ուրիշները: Այն ժամանակ, երբ Կարմիր Բանակը մտավ Հայաստան, և Հայաստանը դարձավ Սովետական /Խորհրդային իշխանությունը հաստատվեց/, Հայաստանը, որ 70 հազ.քառ. կմ.-ից ավելի էր, բաժանվեց մի քանի պետությունների միջև՝ մի մասը Թուրքիային - բոլորդ գիտեք/: Դա Ղարսն է, Սարիղամիշը և այլն: Մի մասն էլ նվիրվեց Ադրբեջանին: Դա Նախիջևանն էր, Ղարաբաղը: Այժմ մենք խոսում ենք քաղաքյուրոյի որոշման մասին: Դա ոչինչ է: Քաղաքյուրոյի որոշումը հիմնվել է հենց այդ որոշման վրա՝ մարտի 16-ի պայմանագրի վրա: Այսինքն՝, մեր առաջիկա նստաշրջաններից մեկում, ինչքան հնարավոր է շուտ, պետք է անպայման դնել այդ պայմանագրի հարցը: Այդ պայմանագրով է, որ Սովետական Ռուսաստանը իրեն իրավունք վերապահեց զորքեր մտցնելու Հայաստան: Այդ պայմանագիրը մեր ստրկության պայմանագիրն է: Հայաստանն իրար մեջ բաժանելու պայմանագիրը: Պետք է անպայման այդ հարցը բարձրացնել առաջիկա նստաշրջաններից մեկում: Հիմա՝ ինչ վերաբերում է այդ արտահերթ նստաշրջանին, որը պետք է այս օրերին հրավիրվի: Արդեն 70 տարուց ավելի է, սկսած մեր Մեծ Ցեղասպանությունից, հայ ժողովուրդը պարբերաբար կոտորվում է: Տարվում է ցեղասպանության քաղաքականություն՝ հայ ժողովրդին ոչնչացնել բոլոր միջոցներով: Այսօր դրան ավելացել է նաև կենսաբանական ցեղասպանությունը: Ի՞նչ եմ ուզում ասել: Մենք մինչև այսօր չենք փորձել 1915 թվականի Ցեղասպանությունը զոնե Հայկական Պառլամենտի մակարդակով, այսինքն՝ մեր Գե-

բազուն Խորհրդի մակարդակով, ճանաչել տալու: Եվ այսօր, ինձ թվում է, դրա ամենալավ ժամանակն է: Վաղը ուշ կլինի դրա համար: Վաղը Մոսկվան չի թողնի այն իրականացնել, դնել հերթական նստաշրջանի: Նա ժամանակ կունենա այդ բանը ծնշելու: Մենք այսօր այդ արտահերթ նստաշրջանին պետք է անպայման դնենք 15 թվականի Ցեղասպանության հարցը, որպեսզի՝ մեր Գերագույն Խորհրդի նստաշրջանը ճանաչի 1915 թվականի Ցեղասպանությունը, Ապրիլի 24-ը հայտարարի Սգո օր և դիմի ՍՍՀՄ գերագույն խորհրդին՝ ճանաչելու հայկական Ցեղասպանությունը: Հարցը դա է: Հայկական հարցը, հայկական Ցեղասպանության հարցը՝ մինչև այսօր բոլոր պետությունները՝ սկսած Սովետական Միությունից, Եվրոպան՝ նույնը, Ամերիկան, բոլորը օգտագործել են իրենց շահերի տեսակետից: Բոլորն այդ հարցը սպեկուլյացիայի են ենթարկել: Բոլորը մեր գլխի վրայով լուծել են իրենց հարցերը: Եթե մեկին պետք է եղել Թուրքիայի հետ որևէ հարց լուծել, անպայման վախեցրել է Հայկական Ցեղասպանության և Հայկական հարցով: Հերիք եղավ, ինչքան մեր գլխի վրայով մեր սուրբ, այդ սրբազան հարցը դարձնեն խաղալիք: Ժամանակն է, այդ հարցով նրանց իրար դեմ հանելու: Թող նրանք հիմա խաղան իրար դեմ: Անպայման այդ նստաշրջանում դնել այդ հարցը: Ես պահանջում եմ: Ավելի ճիշտ ժողովուրդն ինքը պետք է պահանջի, իսկ կոմիտեն անպայման պետք է պատվիրանի մեր դեպուտատներին, որ ավելացվի այդ կետը, ճանաչվի 1915 թվականը: